ՔԱՂՎԱԾՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԻՑ

16 նոյեմբերի 2022թ. **ք. Երևան**

ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովը 2022թ. նոյեմբերի 16-ի նիստում քննարկեց դատախազ Լ. Գ.-ին արտահերթ կարգով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկելու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի առաջարկությունը:

Հաշվի առնելով հարցազրույցի արդյունքները և ղեկավարվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և ՀՀ գլխավոր դատախազի՝ 2018 թվականի ապրիլի 27-ի թիվ 45 հրամանով սահմանված հավելվածի 7-րդ կետի 12-րդ ենթակետով՝ Հանձնաժողովը բաց քվեարկությամբ միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

Դրական եզրակացություն ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին՝ Լ. Գ.-ին «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: